



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը.

Դաստիարակ՝ Անի Քառյան

Մանկապարտեզ՝ « Այրումի մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն.....	3
Հայրենասիրական դաստիարակության նպատակը.....	4
Նախադպրոցականներին հայրենասիրական ոգով դաստիարակելու կարևոր կետերը	7
Հայրենասիրությանն ու հայրենաճանաչողությանն ուղղված իմ աշխատանքները.....	9
Եզրակացություն	13
Առաջարկություն.....	14
Օգտագործված գրականություն.....	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նա, ով չի սիրում իր հայրենիքը, ոչինչ չի սիրում:

Ջորջ Բայրոն

Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան:

Րաֆֆի

Կա մի ուրիշ մարմին, որ ավելի ու ավելի պաշտելի է, քան մեր սեփականը:

Մուրացան

Հայրենասիրությունն սկսվում է հայրենաճանաչողությունից:

Հայրենասիրական դաստիարակությունը հիմնված է երեխայի բարոյական զգացմունքների վրա: Այն այսօրվա կարևորագույն խնդիրներից է:

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության գործընթացն անհրաժեշտ է սկսել նախադպրոցական հաստատությունում, որի հիման վրա էլ կձևավորվի նրանց հայրենաճանաչողությունը: Յուրաքանչյուր երեխա յուրովի է ընկալում իրեն շրջապատող միջավայրը: Այդ պատճառով էլ հայրենաճանաչողության ուսուցումը պետք է սկսել հայրենասիրական զգացմունքների ուսուցմամբ: Հայրենաճանաչողությունը բարոյական և հայրենասիրական կրթություն է: Հայրենասիրությունը ձևավորվում է ընտանիքում, նախադպրոցական հաստատությունում գաղափարական ու դաստիարակչական աշխատանքի ազդեցությամբ: Հայրենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մասն է:

Հայրենասիրական դաստիարակության նպատակը

Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ Մարդու առաջին արժանիքն է:

Նապոլեոն Բոնապարտ

Հայրենասիրական դաստիարակությունը հայրենիքի հանդեպ սիրո դաստիարակությունն է, նրան նվիրվածությունը, նրա հանդեպ պատասխանատվությունն ու հպարտությունը, նրա բարօրության համար աշխատելու ցանկությունը, որն սկսվում է ձևավորվել արդեն իսկ նախադպրոցական տարիքում: Առանց հարգանքի հայրենիքի

պատմության և մշակույթի, նրա պետական խորհրդանիշների նկատմամբ անհնար է զարգացնել ինքնագնահատականը, ինքնավստահությունը:

Ուսուցիչների և ծնողների խնդիրն է երեխաների մեջ հնարավորինս շուտ արթնացնել սերը հայրենի հողի նկատմամբ, նրանց մեջ ձևավորել այնպիսի բնավորության գծեր, որոնք կօգնեն նրանց դառնալ արժանավոր մարդ և իրենց երկրի արժանի քաղաքացի: Սերմանել հարգանք իրենց տան, մանկապարտեզի, հայրենի փողոցի, քաղաքի նկատմամբ: Ձևավորել հպարտության զգացում երկրի, բանակի նկատմամբ,

հպարտություն զինվորների արիությամբ:

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության մեջ մեծ նշանակություն ունի նրանց անմիջական մասնակցությունը տոներին՝ Քաղաքի օր, Հաղթանակի օր, Հայրենիքի պաշտպանի օր: Երեխաները

պատրաստում են բացիկներ, ելույթներ ունենում ցերեկույթների ժամանակ:
Նրանք ներգրավվածության զգացում են ունենում կարևոր
իրադարձություններում:

Նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթությունը հայրենի քաղաքի,
տարածաշրջանի և հայրենի երկրի հետ երկար և բարդ գործընթաց է:
Դրական արդյունքի կարելի է հասնել միայն համակարգված աշխատանքով:

Մենք երեխաներին ծանոթացնում ենք մեր տարածաշրջանի պատմությանն ու
մշակույթին, դաստիարակում սեր, հարգանք նրա նկատմամբ: Երեխաներին
պետք է սովորեցնել սիրել իրենց քաղաքը, որը հայրենիքի մի մասն է:

Այս մոտեցումը թույլ կտա ձևավորել հայրենասիրական դիրքորոշումներ:
Դաստիարակի և ծնողի խնդիրն է հնարավորինս սեր սերմանել հայրենի հողի
նկատմամբ:

Հայրենի քաղաքի հանդեպ սեր սերմանելը նշանակում է կրթական
աշխատանքը կապել երեխային շրջապատող սոցիալական կյանքի հետ:

Լիիրավ հայրենասիրական դաստիարակության համար նախադպրոցական
ուսումնական հաստատությունները օգտագործում են աշխատանքի տարբեր
մեթոդներ և ձևեր՝ հաշվի առնելով երեխայի տարիքային աշխարհայացքը.

.Էքսկուրսիաներ և նպատակային զբոսանքներ

Դրանք կարող են լինել էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, հուշարձաններ:

.Ուսուցչի պատմությունը:

.Մշտադիտարկում հայրենի բնակավայրի արտաքին տեսքի:

.Զրույցներ հայրենի քաղաքի, երկրի, նրա պատմության մասին:

.Նկարագրողումների, ֆիլմերի ցուցադրում:

.Ծանոթություն ժողովրդական արվեստի արտադրանքներին:

Հայրենիքի զգացումը երեխայի մեջ սկսվում է ընտանիքի նկատմամբ վերաբերմունքից, ամենամոտ մարդկանց նկատմամբ՝ մոր, հոր, տատիկի, պապի, եղբոր, քրոջ նկատմամբ: Սրանք այն արմատներն են, որոնք կապում են իր տան և անմիջական միջավայրի հետ:

Հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է, եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ: Ընտանիքի հետ աշխատանքում մանկապարտեզը պետք է ապավինի ծնողներին որպես երեխայի անհատականության ձևավորման իրավահավասար մասնկիցներ: Մեծերը պետք է կարողանան ընտրել այն գիտելիքները, որոնք հասանելի են նախադպրոցական տարիքի երեխաներին, ինչը կարող է նրանց ոգևորել:

Հայրենաճանաչողության դաստիարակության նպատակն է կրթել հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է իր հայրենիքին:

Երեխաները պետք է իմանան նախնիների մշակույթը, որը խթանում է հարգանքը, հպարտությունը այն հողի համար, որտեղ ապրում են:

Ավագ նախադպրոցական տարիքում զարգանում են բարձր սոցիալական մոտիվներ և զգացմունքներ: Այս ազդեցության արմատները գտնվում են ժողովրդի լեզվում, որը երեխան սովորում է ժողովրդական երգերից, խաղերից՝ տպավորություններով հայրենի բնության, աշխատանքի սովորույթների մասին, որում նա ապրում է:

Նախադպրոցականներին հայրենասիրական

ոգով դաստիարակելու կետերը

Հայրենաճանաչողության դաստիարակությունը մի գործընթաց է դաստիարակների ու սաների միջև, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը:

Այս դաստիարակության նպատակն է կրթել հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին և պատրաստ է պաշտպանել հայրենիքը: Երեխաների հայրենաճանաչողության դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների համար գոյություն ունի մեթոդաբանական գրականություն: Դրա հիման վրա կրթական աշխատանքի այս ուղղությամբ կարելի է առանձնացնել առաջադրանքների մի ամբողջ համալիր.

.Բարձրացնել երեխայի սերը իր ընտանիքի, տան, մանկապարտեզի, քաղաքի կամ գյուղի, փողոցի նկատմամբ:

.Երեխաների իմացություն իր արմատների մասին:

.Երեխաների ծանոթացում քաղաքի պատմությանը և ենթակառուցյուններին:

.Երեխաների ծանոթացում պետության խորհրդանիշներին՝ դրոշ, զինանշան, օրհներգ

.Այցելություն մշակութային վայրեր՝ հուշարձաններ, թանգարաններ:

Դեռևս կարելի է նշել մի շարք աշխատանքներ: Երեխաների գործունեության տեսակներում են լուծվում այս խնդիրները: Խմբասենյակը, խաղը, առօրյա կյանքը մեծ դեր ունեն, որոնք երեխայի մեջ դաստիարակում են հայրենաճանաչողություն, որն էլ մանկավարժական բարդ գործընթաց է: Այն հիմնված է հայրենասիրության՝ որպես անհատական որակի ձևավորման վրա:

Յուրաքանչյուր տարիքային փուլում հայրենաճանաչողության և հայրենասիրական դաստիարակության դրսևորումներն ունեն

իրենց առանձնահատկությունները:

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրությունը սերմանելու

նպատակն է ձևավորել բարի գործեր և արարքներ կատարելու անհրաժեշտություն:

Հայրենաճանաչողությունը մեծահասակի և երեխաների փոխգործակցությունը համատեղ գործունեության և հաղորդակցության մեջ է, որն ուղղված է երեխայի մեջ մարդու համընդհանուր բարոյական որակների բացահայտմանն ու ձևավորմանը:

Դաստիարակի անձնական օրինակը, դատողությունները դասիարակության ամենաարդյունավետ գործոններն են: Եթե ուզում ենք, որ մեր երեխաները սիրեն իրենց երկիրը, իրենց քաղաքը, պետք է նրանց ցույց տանք գրավիչ կողմից: Բայց չափահասի ոչ մի գիտելիք արդյունք չի տա, եթե նա ինքը չի սիրում իր երկիրը, իր քաղաքը, իր ժողովրդին:

Եվ տունը, բակը, տեսարանը բնակարանների և մանկապարտեզի պատուհաններից, որտեղ նա ուրախություն է ստանում իր հասակակիցների հետ շփվելուց, և իր հայրենի բնությունը, որ շրջապատում է իրեն՝ այս ամենը Հայրենիք է:

Հայրենասիրությանն ու հայրենաճանաչողությանն ուղղված իմ աշխատանքները

Հետազոտության ժամանակ կիրառել եմ ԽԻԿ համակարգը, իրականացրել եմ միջին խմբի երեխաների հետ:

Պարապմունքն արձանագրվել է մեթոդիստի կողմից:

Աշխատանքս պլանավորել եմ համալիր ծրագրով՝ հաշվի առնելով տարիքային չափորոշչային զարգացման ոլորտը:

Միջավայրը- խմբասենյակ

Նյութերը- դրոշ, զինանշան, նկարներ տեսարժան վայրերով, այլ երկրների դրոշներ, ձայնարկիչ :

Պարապմունքի պլան

Թեման- Հայաստանն իմ տունն է, իմ հայրենիքը

Տեսակը- Զրույց- պատմում նկարների միջոցով

Նպատակը- Ծանոթացնել երկրի քարտեզին, դրոշին, զինանշանին, օրհներգին

Զարգացնել- Երեխաների կապակցված խոսքը, հաղորդակցումը:

Վերջնարդյունք- իմանա իր քաղաքը, հայրենիքը: Ճանաչի դրոշը, զինանշանը, օրհներգը:

Ընթացքը- Խթանման փուլ

-Երեխաներ, երբ առավոտյան եկաք մանկապարտեզ, ճանապարհին ինչ շինություններ տեսաք:

-Այդ բոլորը կառուցված են մեր հայրենի հողի վրա:

-Ինչ եք հասկանում Հայրենիք ասելով:

-Հայրենիքը մեր հողն ու ջուրն է, որտեղ ծնվել ենք, մեծանում ենք: Մեր մանկապարտեզն է, մեր ընկերները, մեր բակը, մեզ շրջապատող լեռները, Սևանա լիճը, Մասիսն ու Արագածը:

-Մեր հայրենիքը Հայաստանի հանրապետությունն է:

Երեխաներն արտահայտում են իրենց կարծիքը:

Իմաստի ընկալման փուլ

Երեխաները նստել են կիսաշրջանաձև: Նրանց պատասխաններից հետո ընթերցեցի Ս. Կապուտիկյանի “Երգ հայրենիքիս մասին” բանաստեղծությունը՝ փակցնելով համապատասխան նկարները՝ երկինք, դաշտ, լեռներ, արև, ծաղիկներ, ջրվեժ, նուռ, խաղող, հաց, արտեր, արծիվ:

Զրույց բանաստեղծության շուրջ:

Ուղղում եմ բաց հարցեր երեխաներին:

-Ինչի մասին էր պատմում հեղինակը բանաստեղծության մեջ:

-Ինչպես են անվանում մեր հանրապետությունը,

-Ինչ ենք հասկանում Հայաստան ասելով:

-Որն է Հայաստանի մայրաքաղաքը:

Ցուցադրեցի Հայաստանի աշխարհագրական քարտեզը, որի վրա ցույց տվեցինք լեռները, գետերը, Սևանա լիճը: Զրուցեցինք գերիշխող գույների մասին:

Ցուցադրեցի զինանշանը. Արծիվը խորհրդանշում է մեր ժողովրդի իմաստությունը, առյուծը՝ հզորությունը: Պատկերված են հայկական չորս հզոր թագավորությունները, կենտրոնում Արարատ սարն է՝ վրան ջրհեղեղից փրկված Նոյյան տապանը, իսկ ներքևում ցորենի հասկերն են:

Ցուցադրեցի ՀՀ եռագույնը՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն: Ծիրանագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը անկախության ու ազատության համար, կապույտը՝ ապրելու կամքը խաղաղ երկնքի տակ, ծիրանագույնը՝

աշխատասիրությունը:

Հաջորդ խորհրդանիշը օրհներգն է: Այն լսելիս կամ երգելիս ոտքի ենք կանգնում և աջ ձեռքը սեղմում կրծքին: Դա նշանակում է, որ սիրում ու հպարտանում ենք մեր հայրենիքով:

Ֆիզկուլտդադար—«Շոգեքարշ, շարժվիր»

Երեխաները, կատարելով համապատասխան շարժումները՝ հասան աթոռակներին:

Խաղ—«Ճանաչիր քո դրոշը»

Գրատախտակին թակցրեցի հինգ տարբեր երկրների դրոշներ, երեխաներն առանձնացրեցին ՀՀ եռագույնը:

Օրհներգը լսելու համար օգտագործվել է ձայնարկիչ:

Կշռադատման փուլ

Հարցրեցի, թե, արդյոք, դուր եկավ երեխաներին մեր զրույցը, ինչ նոր բան իմացան:

Զբոսանքի ժամանակ այցելեցինք, ծաղիկներ խոնարհեցինք, հարգանքի տուրք մատուցեցինք խմբի երեխաներից մեկի հայրիկին նվիրված հուշարձանին, ով իր երիտասարդ կյանքը զոհել է Արցախյան քառասունչորսօրյա պատերազմում: Երգեցինքն «Խաղաղություն» երգը:

Հանդիպում կազմակերպեցի ծնող-գինվորականների հետ, ովքեր այսօր ամուր կանգնած են սահմանին, դիրքերում՝ հանուն հայրենի հողի, քանի որ հայրենիքն սկսվում է սահմանից, իսկ սահմաններն անառիկ են հայ քաջորդիների անկոտրուն կամքի շնորհիվ:

Դաստիարակ- ծնող- երեխա կապն ամրապնդելու համար ծնողներին առաջարկեցի ստեղծել պաստառ «Հայրենիքիս գույները» թեմայով:

Իմ հետազոտության արդյունքում պարզեցի, որ ծնողների մեծամասնությունը երեխաների հետ այցելել է մեր հայրենիքի պատմական և տեսարժան վայրեր: Երեխաների ակտիվ պատասխաններից զգացի նրանց սերն ու ջերմությունը հայրենիքի, ծննդավայրի, հայրենի բնության նկատմամբ:

Մեթոդիստի դիտարկում

Դաստիարակի կողմից ընտրված էր շատ կարևոր թեմա, քանի որ հայրենաճանաչողության սերմերը ցանվում են նախադպրոցական հաստատությունում:

Պարապմունքի համար ընտրված նյութերը համապատասխանում էին թեմային:

Թեմատիկ զրույցի միջոցով զարգացրեց երեխաների կապակցված խոսքը:

Դաստիարակեց հպարտության և սիրո զգացում հայրենիքի հանդեպ:

Երեխաներն անկաշկանդ էին: Սովորեցին օգտագործել պատկերավոր բառեր

և արտահայտություններ հայրենիքի մասին: Ճանաչեցին ՀՀ խորհրդանիշները:

Եզրակացություն

Հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է, եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ:

Նախադպրոցականներին միջավայրին ծանոթացնելու գործընթացում ընտանիքը ներգրավելու անհրաժեշտությունը բացատրվում է հատուկ մանկավարժական կարողություննորով, որոնք ունի ընտանիքը: Նրանց սոցիալական կողմնորոշումը բարենպաստ պայմաններ է ստեղծում ավելի բարձր բարոյական զգացմունքների դաստախրակության համար:

Հայրենաճանաչողության դաստիարակության մեջ հաջողության կարելի է հասնել, եթե մեծերն իրենք իմանան և սիրեն իրենց երկրի, քաղաքի կամ գյուղի պատմությունը: Մենք պետք է կարողանանք ընտրել այն գիտելիքները, որոնք հասանելի են նախադպրոցական տարիքի երեխաներին, ինչը կարող է երեխաներին ոգևորել և հպարտանալ:

Առաջարկություններ

Ելնելով նշվածներից՝ առաջ են եկել հետևյալ առաջարկությունները.

Մենք պետք է օգտագործենք բոլոր տեսակի բանահյուսությունները՝ հեքիաթներ, ասացվացքներ, երգեր, տաղեր, պարեր: Ժողովրդական արվեստում պահպանվել են բարոյական արժեքներ բարության, գեղեցկության, ճշմարտության, քաջության, աշխատասիրության և հավատարմության գաղափարների շուրջ: Շրջապատող առարկաները, որոնք առաջին անգամ են արթնացնում երեխայի հոգին, նրա մեջ գեղեցկության զգացումը, հետաքրքրություն են սերմանում, պետք է լինեն ազգային: Սա օգնում է երեխաներին վաղ տարիքից հասկանալ, որ իրենք հայ ժողովրդի մի մասնիկն են:

Օգտագործված Գրականություն

- 1.Դաշնային օրենքը «Կրթության մասին Ռուսաստանի Դաշնություն» Մոսկվա 2013
- 2.Նախադպրոցական կրթության FS ES, Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարության 2013թ. Հոկտեմբերի 17-ի թիվ 1155 հրամանը:
- 3.Բելգորոդի շրջանի կրթության վարչության տեղեկատվական մեթոդական նամակ
«Ուսումնական գործընթացի կազմակերպում նախադպրոցական տարիքի նախադպրոցական կրթության դաշնային պետական կրթական չափորոշիչի ներդրման շրջանակներում» ուսումնական հաստատություններ Բելգորոդի մարզը 2014-2015թթ. ուսումնական տարին:
- 4.Երեխաներին դաստիարակել ժողովրդական մշակույթի ավանդույթների վրա Վոլգոգրադ 2008թ:
- 5.Բարոյական զգացմունքների կրթություն նախադպրոցականների մոտ- Էդ. Վինոգրադովա Ա.Մ.,- Մ. 1980թ: